EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
PRESS RELEASE

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ սփյուռքի նախարարությունը 2013թ. կազմակերպում է «Սփյուռք» ամառային դպրոցը հետևյալ ուղղություններով.

1. Հայոց լեզվի արագացված դասընթաց,
2. Ազգային երգի ու պարի խմբավարների, պարուսույցների վարպետության դասընթացներ,
3. Կրթօջախների տնօրենների, կազմակերպիչների և ուսուցիչների վերապատրաստում,
4. Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դասընթաց,
5. Սփյուռքի լրագրողների դասընթաց:

Ամառային դպրոցի մանրամասների համար տե՛ս ստորև ներկայացվող սփյուռքի նախարարության հայտարարությունը:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613 234-3710 Fax: 613 234-3444

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՍՓՅՈՒՌՔ» ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Սփյուռքի հայ համայնքներում ազգային ինքնության պահպանմանն ու զորացմանը, երիտասարդների շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, Սփյուռքի ՀԼՄ-երի գործունեությանը, ինչպես նաև համայնքների ինքնակազմակերպմանն աջակցության նպատակով ՀՀ սփյուռքի նախարարությունը Երևանի պետական համալսարանի բազայի վրա 2013թ. կազմակերպում է «Սփյուռք» ամառային դպրոց:

«Սփյուռք» դպրոցում գործելու են դասընթացներ հինգ ուղղություններով.

1. Հայոց լեզվի արագացված դասընթաց,
2. Ազգային երգի ու պարի խմբավարների, պարուսույցների վարպետության դասընթացներ,
3. Կրթօջախների տնօրենների, կազմակերպիչների և ուսուցիչների, վերապատրաստում,
4. Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դասընթաց,
5. Սփյուռքի լրագրողների դասընթաց:

***1.* Հայոց լեզվի արագացված ուսուցում - 8 հուլիսի - 2 օգոստոսի, 2013թ. (4 շաբաթ)**

Հայոց լեզվի ուսուցումն իրականացվելու է՝

Լեզվական իմացության երեք մակարդակով (լեզվին չտիրապետողների, ցածր և միջին իմացությամբ) խմբերում՝ արևելահայերեն ու արևմտահայերեն:

Դասընթացներում կդասավանդեն հանրապետության և սփյուռքի հայտնի լեզվաբան-մանկավարժներ: Մայրենիի ուսուցման ընթացքում կզուգակցվեն տեսական-գործնական պարապմունքներ, սովորողները հնարավորություն կունենան տարբեր միջավայրերում մայրենի լեզվով հաղորդակցվելու, լեզվի ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցներից օգտվելու: Երեքշաբաթյա դասընթացներին կարող են մասնակցել սփյուռքահայեր՝ առանց տարիքային սահմանափակման:

2. Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ - 15 հուլիսի - 2 օգոստոսի, 2013 թ. (3 շաբաթ)

Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստմանը կարող են մասնակցել Սփյուռքի ազգային վարժարանների, ամենօրյա և մեկօրյա դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, կրթական գործի կազմակերպիչներ: Ծրագրի ընթացքում նախապատվություն է տրվելու գործնական պարապմունքներին, ուսումնական, արտադասարանական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ փորձի փոխանակմանը, հայաստանյան կրթօջախների մասնագետների և մանկավարժների հետ համատեղ ծրագրերի մշակմանը: Ծրագիրը կիրականացվի Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոսների, հանրապետության փորձառու մանկավարժների

մասնակցությամբ: Կքննարկվեն Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման շրջանակներում, համայնքներում հայապահպանական ծրագրերի իրականացման գործում սփյուռքի կրթօջախների դերակատարության բարձրացման հարցեր:

3. **Ազգային երգի ու պարի դասընթացներ – 24 հուլիսի – 2 օգոստոսի, 2013 թ. (10 օր):**

Ազգային երգի ու պարի խմբավարների, պարուսույցների վարպետության դասընթացների նպատակը սփյուռքի երգչախմբերի խմբավարներին, երաժշտության ուսուցիչներին, պարուսույցներին ծանոթացնելն է հայկական երգերի ու պարերի յուրահատկությանը, գաղափարական ուղղվածությանը, պատմական նշանակությանը, մշակման եղանակներին, կառուցվածքային դասակարգմանը և ավանդաբար ժառանգված ժողովրդական պարանմուշներին, երգ-երաժշտությանը: Դասընթացները կվարեն հանրապետության ճանաչված երաժշտագետներ, պարուսույցներ:

4. **Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դասընթաց – 22 հուլիսի – 2 օգոստոսի, 2013 թ. (2 շաբաթ)**

Երիտասարդ առաջնորդների դպրոցին կարող են մասնակցել սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների 20-30 տարեկան ղեկավարներ և հայկական կառույցների երիտասարդ ներկայացուցիչներ:

Դպրոցի նպատակն է՝

- սփյուռքի հայ երիտասարդ առաջնորդների համար ստեղծել փոխադարձ ճանաչողության դաշտ, կապել հայրենիքին, ծանոթացնել նախարարության համակարգին, ներքին և արտաքին քաղաքականության առանձնահատկություններին, կազմակերպել հանդիպումներ պետական իշխանության համակարգի ներկայացուցիչների, ՀԼՄ-ների հետ, մշակել հետագա համագործակցության ձևեր և միջոցներ:
- քննարկել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հեռանկարներն ու ձևերը՝ հայապահպանության, հայ համայնքներում ազգային ինքնության պահպանման ու զարգացման, ձուլման դեմ պայքարի հարցերը:
- համատեղ քննարկումների, երկխոսության արդյունքում առաջարկել հայկական համայնքներում արդյունավետ կառավարման կառուցակարգերի ներդրման, երիտասարդների ակտիվ ներգրավման ձևեր և միջոցներ, ստեղծել նրանց ակտիվացման, հայրենիքի հետ սերտ կապերի հաստատման համար ամուր հիմքեր:

5. **Սփյուռքի լրագրողների դասընթաց - 22 հուլիսի – 2 օգոստոսի, 2013թ (2 շաբաթ)**

Սփյուռքի լրագրողների դպրոցում կվերապատրաստվեն Սփյուռքի ինչպես հայկական ՀԼՄ-ում աշխատող, այնպես էլ համայնքների կողմից երաշխավորված լրագրողներ, ովքեր պատրաստվում են աշխատել տվյալ համայնքի ՀԼՄ-ում: Ծրագիրը կիրականացվի «Հայ-թուրքական հարաբերություններն արդի փուլում», «Հայ-ադրբեջանական հարաբերություններ» և «Ցեղասպանագիտություն» թեմատիկ խմբերում: Դասընթացներին սփյուռքի լրագրողները հնարավորություն կունենան տեսական և գործնական գիտելիքներ ստանալ Հայաստանի և Սփյուռքի ճանաչված և բազմափորձ լրագրողներից, պետական-հասարակական գործիչներից, ծանոթանալ Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական

հիմնախնդիրներին, ներկա լինել համահայկական նշանակության խնդիրներին նվիրված դասախոսությունների:

Դասընթացների մասնակիցների համար կկազմակերպվեն մշակութային միջոցառումներ, այցելություններ Հայաստանի պատմական ու տեսարժան վայրեր, հանդիպումներ պետական, հասարակական, մշակույթի գործիչների հետ:

Դասընթացներն անցկացվելու են հայերենով:

Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները:

Խմբերի դասընթացների կազմակերպման, մասնակիցների համար մշակութային միջոցառումների, շրջայցերի, մասամբ՝ նաև սննդի ծախսերը հոգում է ՀՀ սփյուռքի նախարարությունը:

Կարիք ունեցողները կապահովվեն գիշերակացով՝ ՀՀ սփյուռքի նախարարության հաշվին: Ցանկացողներին խնդրում ենք մինչև 2013թ. մայիսի 15-ը ներկայացնել համապատասխան հայտեր (հայտաձևերը կցված են) ՀՀ սփյուռքի նախարարություն հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան, 26/1:

E-mail:allarmenian@yahoo.com, gitakrtakan.diaspora@yandex.com,
gitakrtakan-diaspora@mail.ru կամ զանգահարել +37410 585601 /**117**/:

«Սփյուռք» ամառային դպրոցի մասին տեղեկատվությունը, դասընթացների մասնակցության հայտերը զետեղված են նաև ՀՀ սփյուռքի նախարարության կայքէջում՝ www.mindiaspora.am և «Հայերն այսօր»՝ www.hayernaysor.am էլեկտրոնային թերթում:

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ